# ՀՀ կառավարության որոշման նախագիծ

# ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**<<————>>————2021թ. N————Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1994-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ**

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 և 2007 թվականի հունիսի 21-ի N 819-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1994-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 3-րդ կետում «2022» թիվը փոխարինել «2025» թվով:

2. Որոշման 1-ին կետով հաստատված կարգի՝

1) 41-րդ կետի աղյուսակի 2-րդ ենթակետի «Մակնիշ» բառը փոխարինել «Մակնիշի ծագման երկիր» բառերով։

2) 49-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<49. Մրցույթի նվազագույն անցողիկ միավոր է համարվում 50 միավորը։ Մրցույթի արդյունքում առավելագույն ընդհանուր միավորներ հավաքած մասնակիցը ճանաչվում է մրցույթը հաղթող։»

3) 64-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<64. Երթուղիներն սպասարկելու իրավունքը տրվում է 10 տարի ժամկետով։»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։